ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ N 31

ԵՐԵՎԱՆԻ <<ԱՐԱՐԱՏ >> ԿՈՆՅԱԿԻ ԳԻՆՈՒ ԿՈՄԲԻՆԱՏԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 52-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Երևանի <<Արարատ>> Կոնյակի գինու կոմբինատի տնօրեն Ս.Զաքարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Ս.Զաքարյանի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել Երևանի <<Արարատ>> Կոնյակի, Գինու կոմբինատին պատկանող պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում գտնվող (համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2421994 վկայականի) շինությունները՝ N3-, N8, N11,N 12 և N17:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 18 թ. փետրարի 06
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 32

ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ.Արթուր Ասատրյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Արթուր Ասատրյանին տալ իրեն պատկանող արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արտադրական օբյեկտրերի կառուցապատման հողամասում արտադրամասի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն:

2. Հանձնարարել Արթուր Ասատրյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18 թ.Փետրվարի06
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 33

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Մեխակ Կարակեյանի դիմումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ շինությունը կառուցվել է ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մեխակ Կարակեյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի 4-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունը՝ բնակելի տուն՝446.07քմ, համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականտերը

1) Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1159782 /մեկ միլիոն հարյուր հիսունինն հազար յոթ հարյուր ութսուն երկու / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 18թ.փետրվարի 08
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայ աստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 34

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

2018 թվականի փետրվարի 13-ին ժամը 11:30 հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1.Վերին Պտղնի համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

2.Վերին Պտղնի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

3. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 18թ. փետրվարի 08
գ.Վերին Պտղնի